


Գուրգեն Շահյան



Կապիական  
առաջնորդ

891.99  
Հ-20

Ա.ԶԵՐՆԵԶՐ  
Բագու - 1934



19 NOV 2011

891.99

Հ-20


ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀԱՅՈՒ

և աւ.

# ԿԱՍՊԻԱԿԱՆ ԱՌԱՎՈՏ

(Բանաստեղծությունների փոքրիկ ժողովածու)

1007 3861  
32842



1934

Հ. Ա. ԽՈՍՀԻԿԻ ՁԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

13 JUL 2013

16960

Խմբագիր ՅՈՒՂԱՐ  
Տեխ. Խմբագիր Ա. Արխան

ԲՂՈԿ

Baş mətbuat mədirliyi myvəkkiliyi № 3957 Sifariş № 855  
Tiraz 1500. İstehsaata verilmiş 14/VII - 34. Capa verilmiş  
22/X - 34. Cap listi 3. Kaçqız formatı 61X94.  
Azərnəşr mətbəəsində basıldı Bakı, Əli Bajramov ky-  
cəsi, 26-lar adına „Kitab sarayı“

## Բ Ա Լ Ի Կ Ի Ն

Այնպես թեթև, այնպես անուշ ժպտում ես դռւ,  
Ամբանում ու մեծանում ես, իմ ժիր մանուկ.  
Յեվ յերկերդ ուրիշ յերդ ե քո գեմ մանում  
Այնպես անուշ, այնպես թեթև ժպտում ես դռւ,  
Հոկտեմբերյան զվարթաձայն իմ լավ մանուկ,  
Մեծացիր, ո, յերկըիս նման պայծառանուն:

\* \* \*

Դ. Մ. Ֆուրմանովին

Լինել քեզ պես խիզախ լինել, մարտիկ քեզ պես,  
Զնահանջել վոչ մի դիրքից, բարիկադից  
Իմ մարտերում չխնայել վոչ մի կաթիւ,  
Լինել անվախ, լինել խիզախ, լինել քեզ պես:

Առնել բերգեր, զյուղ ու քաղաք, հետո մեռնել  
Հաղթանակի ճամբին մեռնել վորպես հերոս  
Մահից հետո պայքարներում լինել դըռշ,  
Լինել խիզախ, լինել մարտիկ, քեզ պես լինել.

ՀԱՍՈՒՆԱՅՈՒԹ

Ծաղկում ե, աճում ե ծառը,  
Ամրանում են ճյուղերը նրա.  
Արել այնքան վառ ու պայծառ ե,  
Շողերը՝ ճյուղերի վրա:

Զգում ես, հասուն ես դու եւ,  
Աճում ես, ծառի պես ծաղկում.  
Յեվ միտքդ պարզ ե ու հատու ե  
Յերկիրն ե ծաղկում քո յերգում:

ՊԵՏՋԱԾՈՒՅԹ

Դաշտերը հիմա հասուն, հասուն են,  
Հողն և փսփսում հասկերի տակ.  
Առուն կարկաչում, խինդով հոսում եւ,  
Ցելում եւ կյանքը առույգ ու հաղթ:

Գյուղը վոխել եւ իր հին ընթացքը,  
Գիշերն եւ դառել ցերեկի պես լույս.  
Գյուղում շըջում եւ ունեվոր կյանքը,  
Ցեղ հաղթանակն եւ յելնում, յելնում:

ԲԵՐԿԻԱՆՅԹ

Անցավ միզոս որը  
Ու մշուշը անուժ.  
Յերգեց տրակտորը,  
Հողն եւ լայնանում:

Յերգեց բերքը հողի,  
Սշխատանքը յերգեց,  
Քըտինքով թող վողողին  
Անցյալի վերքերը:

## ԳՈՒՐԳԻԵՆ ՄԱՀԱԹՈՒՆ

Ապրում ես դու, վարպետ,  
ապրում ես անուշ,  
ո՛ ֆեղնով են հարքել  
յերգերն իմ անուշ.  
Դուրզեն Մահարի

Փոքը յերգեր ես զրում մեծ պոհախ մասին,  
Ելա պոհախ իմ բարեկամ, Գուրզեն Մահարի.

Ու տողերդ են յելնում նրա անտակ թասից,  
Այնքան պարզ ու սիրելի յերգերդ մտերիմ:

Այն, կապրի նա անմահ մեր սրտերում պոհախ,  
Պարզությունով իր հատակ ու քնարով խոհեմ,  
Կանցնի հազար նոր պոհախ—նա կժպտա մերթ-  
մերթ,  
իր Սարոյին տեսնելիս, -սրտում պայծառ խոհերու

Քո յերգն ել նրա պես հարազատ ու մոտիկ,  
Ինձ թվում ե սիրելի ու մտերիմ այնքան,  
Նոր յերգով եմ վողջունում կարմիր առավոտին—  
Ու արեվին վոսկեփայլ, եխ բարեկամ:

\* \* \*

Այսպիս սիրեց նա մեկին, տարվեց նրա սիրով,  
Ու մոռացավ ֆրոնտը ու քնարը խոհեմ  
Սիրո ճամբով գնաց, անվախ գնաց գրոհ,  
Ու կատարին գտաց ծանր ծակոց ու հեղք:  
Սակայն ել ինչ աներ-դարձավ սիրուց խոռով,  
Զգաց պարտությունն իր, կորավ անդարձ  
անհետ:

\* \* \*

I

Զենք մոռանա ծուխն արճճե  
Փոված խոնավ թաց զիբքերում.  
Ու դաշտերում արնոտ լճեր,  
Անթաղ զիեր գորշ լնոներում,  
Զենք մոռանա ծուխն արճճե  
Փոված խոնավ թաց զիբքերում:

II

Յերկիր, արյուն ու մահ տվինք,  
Բարիկագներ առանք կովում.  
Ամեն կիրճում շողաց սվին,  
Նահանջ չեղավ մեր արշավում,  
Յերկիր, արյուն ու մահ տվինք  
Բարրիկագներ առանք կովում:

III

Բանվորական պալատներին,  
Կայաններին մեր նվաճած,  
Դոմիաններին, կոլխոզներին,  
Զենք չի դիպչի թշնամացած  
Բանվորական պալատներին,  
Կայաններին մեր նվաճած:

\* \* \*

Նա նրան սիրեց հայացքով իր խոր  
Ու նրա մասին շարեց անթիվ տողեր.  
Նրա աչքերում սև, ցասում ու նույնիսկ խոհ,  
Սակայն ճամբի կեսին իր քնարը թողեց:

Գրեմ ել ինչ զրել — ժանկոտվեց լարը,  
Յերբ աղջիկը փախավ կոշտ հայացքից նրա. —  
Միայն մի յերգ հիշեց տխուր ու միալար,  
Նրա վարսը գովեց՝ ձեռքը սրտի վրա:

*IV*

Դասակարգի յերթով հաստատ  
Ու փողերով բազմաշառաչ.  
Վերջին կռվում կլինենք զգաստ,  
Կղըսհենք առնջ առնջ.  
Դասակարգի յերթով հաստատ  
Ու փողերով բազմաշառաչ:

*V*

Հովին, քարին, ջրին, լույսին,  
Ու աշխատող մկաններին,  
Վողջուն, վողջուն հարվածային:

**ՈՒՂԵԳԻՐ ԴԵՊԻ ԿՅԱՆՔ**


Մ ի Ա. Գ. Զ Կ Ա

Նրան տեսա արտում,  
Վասկե խուրձը ուսին,  
Դեմքը, դեմքը ժաղառն,  
Բիբերը՝ վոնց լուսին:

Գլխին կարմիր լաչակ,  
Կիմը խփած գոշին.  
Կաները վեր քաշած  
Շորին հասկի փոշի:

Նա խրձեր եր դիզում,  
Կապում, կապում արտակ.  
Ու վեհությամբ դարսում  
Խուրձը՝ խրձի վրա:

Յես նայեցի նրան  
Ու նա ժպտաց անուշ,  
Չեռքը ուսիս վրա  
~~իմաստությունը անուշ:~~



100\*386/  
32847

Արի, արի, պոետ,  
Արի քրտինք թափիր,  
Արի ջանիր ինձ հետ  
Յորնի խուրձը կապիր:

Կապիր դեղիր, դեղիր,  
Ռիթմով նրանց հսուռն,  
Քո յերգերը հյուսիր,  
Ու տողերդ խոսուն:

Մենք միասին արտում  
Մինչև գիշեր կիշներ  
Խրձեր ելինք կապում,  
Դիզում ցորնի թմբեր:

Յերբ գործարան յեկա,  
Արձակուրդից հետո,  
Յես հիշեցի նրան  
Անհուն մի կարոտով—

Յերբ նայեցի նրան  
Ու նա ժպտաց անուշ.  
Զեսքը ուսիս վրա  
Յերբ վոր իջավ անուշ:

## Պ. Ա. Ն. Զ. Բ.

Հիմա, յերբ գարուն ե, ու յերդ ե ու վազք,  
Հիմա, յերբ արեն ե շողում ու կիզում,  
Անծայր դաշտերում բարձրանում են հասկեր,  
Խնդությունն ուրիշ, ուրիշ յերդ ե ասում:

Ուրիշ հասկեր են բարձրանում, ուրիշ,  
Կյանքի շիթերն են հասունանում այնուեղ,  
Ծփում ե կյանքը ջինջ, ու վորպես ծովը լուրթ,  
Ծնում ե կյանքը նորանոր մարտեր:

Տուր հենց այդ յերգը, հենց այդ յերգը տուր,  
Ասում ե նա ինձ ու ժպտում սիրով,—  
Թող քո յերգերը, յերգերի մարտում,  
Անսահանջ լինին, հար, գնան գրոհ:

Թող քո յերգերում սկլսերը խոսեն,  
Դոնբասը յելնի, Զագեսը լուսե,  
Վոսկե արյունը թող հոսե, հոսե,  
Ու թագուն ժպտա, վառի նոր լույսեր:

Դնեպըլ թող քո յերգը թրջի,  
Մարտաը յերկա յերգերիդ խորքում,  
Ու թելը ձգի քաղաքն իլիչի,  
Բամբակը ձյունե դաշտերի զրկում:

\* \* \*

...Յես նայում եմ նրա բազուկներին տոկուն,  
Նրա գեմքին համառ ու ձերմակ մագերին.  
Նա գառնում է ինձ ու անա նավթոա Բազուն  
Այն քաղաքը, վորին դու յերազել եյիր:

Նայիր ահա Բազուն, վիշկաները հանքի,  
Ահա բանվորական պալատների շարքերը.  
Ահա հերոսները՝ լիինդը նրանց գեմքին—  
Մաշինի պես զործող անթիվ ջլուտ ձեռներ:

«Ահա ծովը կասպի: Այս ջրերի վրա,  
Դու հիշում ես, նսովը նրանց չոքեց,  
Մենք քաղաքը տվինք, նավթը տվինք զրավ,  
Իսկ քաղաքի ներսում անդիւական զորքեր»:

Մի պահ լոռում ենա, կնճոռում ճակատը լայն,  
Ու ծալքերը՝ ճակատի զորշ գիրքերի նման,  
Բռնցքում աչքերը, աչքերի մեջ նոր փայլ—  
Ապա ձեռքով շոյում իր ծնոտը ձերմակ:

«Ե՛ս, դու փոքր տղա դու ի՞նչ, ի՞նչ ես հիշում,  
Դու չես տեսել նրանց մահը հերոսական  
Վարկյաններն այդ զիտես, իմ ծեր սիրտն են  
Նորից լարում եմ յես ուժն իմ ամբամկան:  
տաշում—

26-ին տարան այս ջրերի վրով,  
Շահումյանը ուր ե, Վանյան ու. Ալյոշան,  
Աղիզբեկովն ուր ե, ուր ե հաղթ Պետրովը,  
Սև չերքեղկան իրա լայն ուսերին քաշած:

Եյսպես տարան նրանց այս ջրերով,  
Նավի ծանրությունից ջուրը, ջուրը տնքաց.  
Ալչակույմում նրանք գնդակների հրով—  
Բնկան... արնաշաղախ տվազների գրկում:

Նավթահանքի վրա անգլիական դամշին  
Ու մշուշը խավար մեր սրտերին նստած.  
Բնկնում եյինք սովից ու վոնց ասլեր իշշին,  
Յերբ մահն եր ձչում, ձեռքին կաղամբ փթած:

Ե՛ս, դու փոքր տղա, դու ի՞նչ, ի՞նչ ես հիշում  
Դու չես տեսել նրանց մահը հերոսական,  
Վարկյաններն այդ զիտես, իմ ծեր սիրտն ե  
Նորից լարում եմ յես ուժն իմ ամբամկան:  
տաշում—

Անցան մութ որերը : . . . մեր Բագվի վրա  
Հրշեկ նարդաշող մի նոր արև շողաց,  
Բոլշեկլյան զարկից անդիացին գոռաց,  
Վոռնաց անդոր, փախալ իր-տրոստը թողած :

Այս Բագուն ե ահա, հնամենի մուժից  
Յեղած առույգ ու հաղթ վոնց յերկսթե տղաւ.  
Գրոհում ե առաջ ու զարկ տալիս ուժին,  
Իսկ աչքերում նրա լուսարձակը խաղաղ:

Այս հանքերում հիմա հորդուն նավթն ե յերգում  
Ու մղիչն ե փորում իջնում խորը կրկին,  
Ու աճում ե, ծաղկում հերոսական Բագուն  
Դորին վոչ մի ավագ ել չի կարող ծածկի:

Մենք հրեցինք ծսմի իր ավերից անտաշ,  
Ու ծովափը դարձրինք վիշկաների անտառ.  
Նվաճեցինք նույնիսկ ծովի խորին անտակ,  
Վոր բարախուն յերկը սիրտը նավոով խնդա

Այստեղ ուր ավագ եր ու անապատ մի գորշ,  
Հիմա լոկ բատանն ե փովել ահագնաթափ —  
Բարձրացել այնտեղ փառքի ոլատվի զրոշ,  
Դասակարգի ուժով ու կորովով անաք:

Պյու Բագուն ե ահա, նավթարյուն Բագուն,  
Ուր ջանում են անկանգ ստեղծագործ մարդիկ.  
Բարձրացել են ահա շենքերն ահարկու,  
Սյսեղ չի խնայվում վոչ մի կաթիլ քրտինք:

Վողջնում եմ մեր մեծ, մեր լավ զեկավարին,  
Մեր մեծ զարի, մեր մեծ ու պանծալի մարդուն,  
Վոր աննկուն մտքով մեր մեծ նախ ե վարում,  
Հաղթանակից մինչև հաղթանակն անդուլ:

Հ Ե Ն Ա Կ

«Կովկին՝ յես մի զաւյգ վատեր կտանամ»

Ս. ՏՈՐՈՆՅԻ

Ահա քայլում ե նա վիշկաների մոտով  
Ու նայում ե հեռուն,  
Կանգնում, դեմքը շոյում,  
Աչքերի մեջ ծովը ու նալիրն են խաղում  
Ու յելնում են դեմքեր  
Պայծառացած խինդով:

Նրա զլիսի վրա,  
Ու այտերին նրա,  
Ակսուել ե ձյունը խրամները ձերմակ.  
Նա անցնում ե առաջ,  
Չեռքը փայտի վրա,  
Հետո հիշում մի պահ ուղիները կեռման:

Ե՞ս, Ե՞ս, կինո-լենտը . . .  
Դիրքերը զորշ ու արնաներկ,  
Ու գիշքերում թշնամական բանդան

Թնդանոթ ե հանել . . .  
Նա հիշում ե մի պահ —  
Շրապնելներ յեղան,  
Ու հոսեցին գետեր. արյան, հրի,  
Ե՞ս, սատանան տանի քեզ, գնդացիրի լենտա  
Խլեցիր վոտը հորափորի . . .

Ամեն մի քար նրանք, ամեն շյուղը յերկրի,  
Գյուեք, արնով տոան ընդվզումի պահին,  
Արգելակներ յեղան,  
Կյանքեր ավին մահին,  
Նվաճեցին բերգեր քարից, կրից:

Հիմա հենակ ունի,  
Հիմա հենակ ունի . . .  
Անբաժան իր փայտը թեր տակին —  
Նա անցնում ե առաջ, նայում ե վիշկաներին  
Նայում յերկրի տնափ հաղթանակին:

Նա ամուր գրկում ե հիմա այդ հենակը,  
Ինչպես հրացանը . . . գնդացիրի լենտան,  
Յերբ թշնամին յելնի արնամութ ատամ,  
Այդ հենակով ինքն ել նրանց ուժը կսաստի:

Վոր յերկիրը ազատ շնչի, հպարտանա,  
Արնով առած քարը վոր բարձրանա յերկում.

Դիշկաները յերգեն աշխատանքով անահ  
Ու հասկերը յելնեն մեր դաշտերում:

Ու քայլում ե այսպես վիշկաների մոտով  
Ու նայում ե հեռուն.

Կանգնում դեմքը շոյում.

Աչքերի մեջ ծովը ու նալերն են խաղում,  
Ու դեմքեր են յելնում,  
Պայծառացած խինդով:

## ՀԵՐՈՍԻ

Դու զնում ես գործի առավոտից,  
Զանում ես, վարպետ, առանց դադար.  
Յեվ աշխատանքիդ վառ կարոտից  
Գործարանն ել, տես, ամուր թնդաց:

Չոքում ես խոնավ հողի վրա,  
Կաղապարներ ես հողում շարում,  
Մկանները քո այդպես լարված,  
Ինձ ել են ահա թափահարում:

Յեվ յուղն ե նստում քո հոնքերին,  
Ծուխը աչքերիդ ու կոպերիդ,  
Յեվ յես նայում եմ աշխատանքիդ  
Յեվ քեզ ժպտացող քո իրերին:

Յերեկ եր, այստեղ գործարանում  
Շըջում եր ձեղքը ամոթահար.  
Բրիգազը քո մի տռնն եր ձուլում  
Պարտք եր մնացել, բայց պետք ե տար...

Գու այլակես հարցը դրիբ ուղիղ  
Ու նորից անցար աշխատանքի,  
Հարթեցիր անհարթ մի նոր ուղի,  
Տիրացար վառքի ու հարգանքի:

Գործարանն յելավ խորը ճեղքից,  
Կարմիր տախտակը շողաց պատին,  
Բրիզադը քո դաստկարգից  
Պարզե ստացավ, վորպես մարտիկ:

Հիմա հերոս ես, և ձայնը քո  
Ուժեղ և թնդում զործարանում.  
Դու աշխատում ես միշտ անվրդով  
Յեվ համառությամբ չուզուն ձուլում:

Աշխատիր վարպետ, հողը փորիր,  
Յեվ կաղապարներ շարիր, շարիր,  
Յեթե պղինձը պակսի նորից  
Ահա՝ իմ սիրտն եւ այնտեղ հալիր:

Տրակտոր ե պետք մեր դյուզերին,  
Կոլխոզներին մեր աճած, աճած,  
Վարպետ, ուժ տուր քո բազուկներին  
Ամբողջ յեռանդա ջեղդ լարած:

### ՅԵՐԱԿԻ

Խարտյաշ աչքեր ուներ նա,  
Փոքրիկ մանուկ եր,  
Կարմիր շապիկ եր հագնում  
Ամրան որերին,  
Նա աչքերում իր ծավի  
Խնդություն եր տանում.  
Յեվ յերգում եր յերգն իր  
«Կարմիր Հոկտեմբերիկ»:

Հայր ու մայրը կոլխոզում,  
Աշխատում են միշտ,  
Նա ել տանը չեր նստում  
Գնում եր խաղում,—  
Մինչև յերեկոն եր մութ  
Եր վեշերը թաղում,  
Նա դառնում եր նորից տուն  
Կարմիր Հոկտեմբերիկ:

Գյուղում այգուես եյին միշտ  
Անվանում նրան,

Նըան, ինդասիրտ հենց այդ  
Փոքրիկ մանուկին.  
Նա հալվազում եր մանկանց  
Ու կանգնում շարք շարք,  
Մեկ յերկու ու սլատրաստ,  
Կարմիր Հոկտեմբերիկ:

Դաշտում դնգում ե ահա  
Յերզը կոլխողային,  
Ու հավաքվում բերքը ծով  
Ալիքվող արտերի:  
Նա ել փոքրիկ մանկանց հետ  
Ողնում եր հայրերին,  
Դաշտում հատիկ չեր թողնում  
«Կարմիր Հոկտեմբերիկ!»

Հայրը շահել ե արդեն  
Չորս հարյուր հինգ որ.  
Նրանք ունեն արգեն մի  
Դեղնաճակատ կով:  
Նա տանում եր դաշտերում  
Պահում եր յերգով,  
Նա, ինդասիրտ մի մանուկ  
Կարմիր Հոկտեմբերիկ:

Յեղավ այսպես,-յերեկոն  
Հողնած իջավ գյուղին,  
Ու մութ ու մութը պատեց  
Յեկ գտշտ և ուղի,  
Դեղնաճակատ կովի հետ  
Նա դաւնում եր տուն,  
Յերբ գեղերի մոտ հաջեց,  
Կաղկանձեց մի շուն:  
  
Յերկու ստվեր տեսավ նա—  
Գիշեր ե, մութ ե.  
Կոլխողային դեղի մոտ  
Ի՞նչ են անում նըանք:  
—Ո՞վ ե, ինչ ե.—դե գնա—  
Լսվեց խովոտ մի ձայն,  
Մութում շողաց մի դանակ...  
Ու լնկավ արնոտ...

Տխոնը, տխոնը գիշեր ե,  
Գիշերվա կեսն ե.  
Կապույտ լուսինը յելավ,  
Դեղերի վրա.  
Դեղնաճակատ իր կովը  
Հսկում եր նըան,  
Լիզում, լիզում ճակատը  
Արնոտված այնքան:

Առավոտյան նրա դին  
Տեսան արնոտ լճում,  
Ու թշնամու գանակը  
Նրա կոկորդին:  
Հետո նավթի մի աման  
Ու մի տուփ լուցկի,  
Յեվ արեց բարձրացավ  
Վողողեց չորս դին:

Դաշտում զնդում եւ նորեն  
Յերզը կոլխոզային.  
Ու հավաքվում բերքը ծով  
Ալիքվող արտերիւ  
Նա չկա, բայց նրա պես  
Անթիվ մանուկներ,  
Աշխատում են, ամրանում  
Բերքով հոկտեմբերիւ:

Խարայաշ աչքեր ուներ նա  
Փոքրիկ մանուկ եր,  
Կարմիր շապիկ եր հազնում  
Ամբան որերին:  
Նա աչքերում իր ծալի  
Խնդություն եր պահում,  
Ել չեր յերգում յերգն իր—  
«Կարմիր հոկտեմբերիկ»:

Չեր հավաքում ել մանկանց,  
Չեր կանզնում շարք-շարք,  
Դեղնաճակատ իր կովին,  
Ել չեր տանում դաշտ:  
Նրա անունն եւ շրջում  
Հիմա, ամեն մի տան.

ՅԵՐԳ Ք ՍՈՍՆՎԵՑԻ Մ Ա ՍԻՆ

... Մութ ու մոայլ մի գիշեր

Բանտի դուռը բացին.

Մութ ու մոայլ մի գիշեր,

Նրանց նավը բերին:

Ծովը անքաց այդ գիշեր,

Նավը ճոճվեց են մեր —

— Կացեք, կացեք ընկերներ,

Մենք դնում ենք, կպահք . . .

Նորից վորոտ, գնդակներ —

Բսանվեցն ընկան . . .

Յերգեց քամին աղիողորմ,

Յեվ ավազը լացեց,

Մահը գաժան, անողոք,

Իր փեշերը փռեց:

Քամին ցրեց ավազը,

Յեվ հետքերը խառնեց:

Իջավ արնոտ սավանը՝

Լուսինը մարեց . . .

\* \* \*

Լույս և հիմա այս գիշեր,

Պայքար, յեւանդ ու կամք —

Նրանց անունը անշեղ,

Մեր սրտերում բարկ:

Նրանց անունը՝ պայքար,

Հաղթանակ ու ու գրոշ.

Նրանց անունն առնական՝

Ուղի պարզ ու վորոշ,

Ուղի, վորով հիմա մենք

Գրոհում ենք անահ,

Ու ստեղծում կյանքը՝ նոր

Վեհությամբ անափի:

Ու ձեր լույսը չի մարի

Մարտելում յերբեք,

Ընկերներ իմ քաջարի —

Ընկմած ընկերներ:

*U. P. G. U. Q.*  
*(μηνιδι)*

Ա. Բ Շ Ա. Վ.

Ճախարակիչ ցեխում, դյաղգահի մոտ ահա,  
Կանգնած տաշում ե նա մի խորդ ու բորդ անիվ  
Այդ պատվերը նրան տվել է իր վորդին,  
Բրիգագիր Վանին:

Վանին աչքի ընկնող հարվածային վարպետ,  
Վանին փականագործ ցեխի բրիգագիր,  
Հայրը ճախարակիչ ծերունի եր թեպետ,  
Բայց ուժ ուներ ու թափ բազուկներում:

Յեղ տվել եր Վանին մի խորդ ու բորդ անիվ,  
Պատվիրել եր, — „Հայրիկ, այսոր տաշիր,  
Տաշիր, վորովհետեղ ցեխը հերիք կանգնի,  
Ու մասնակից չլինի մեր պայքարին“:

Հոր կնճռոտ դեմքին ու աչքերում այն խոր,  
Բմբուտ պայքարների քանի, քանի զծեր.  
Նա թնդանոթ է ղեկավարել մի որ,  
Անթիւ սումբեր և ցրել . . .

Նա յեղել ե արնոտ ու խոնավ գիրքերում՝  
Յարի գեմ յեղել ե մարտի,  
Կարմիր պարտիզանների սեղմ շարքերում,  
Թշնամու գեմ կըակ ե վառել . . .

Յեղել ե կարմիր բուզյոնովյան դնդում,  
Նիզակը՝ սաստուն,  
Յեղել ե գիրքում հերոսի պես արթուն,  
Հերոս ե յեղել մարտում . . .

Նրա լայն ու առողջ թիկունքի վրա,  
Չոքել եյին կարկամ հիսունական տարի,  
Յեկ նա համառում ու գործում եր արագ,  
Յեկ քրտինքն եր ծորում աղնձագույն ճա-  
կատին:

Գուղոկը հնչեց. յեղավ ընդմիջում.  
Բանվորներն անցան ճաշի.  
Աղաջանն յեկավ մի շիշ գրպանում,—  
—Գործդ թող, գնանք, այշե . . .

Ու վանու հայրը, Արութը մի քիչ,  
Խոժոռ հայցքը հառած,  
Նայեց Աղաջանի կոշտացած գեմքին,  
Նրա հետ անցավ առաջ:

Դեպոյի բակում, ոելսերի կողքին,  
Մի մեծ արկղ եր ընկած . . .  
Երա հետեվից այդ յերկու հոգին  
Դուրս յեկան շիշը դատարկած . . .

Յերեր քայլերով ներս մտան գեղո-  
Աղաջանը թողեց Արութին  
Արութը մի քիչ ջուր խմեց, հետո  
Մոտեցալ իրա դյաղղահին:

Աչքերն արդեն, արդեն կարմրել,  
Ուղեղը թմրել եր նրա.  
Պտտվիր անիմն արդեն քերվել  
Ու անպետք ընկած եր գաղցահի վրա:

Սառը քրտինքը պտտեց ճակատին,  
Յեկ գեմքը փոխվեց քաթանի.  
Աչքերում շողաց նման կինուենտի  
Անիմը . . . Գինին . . . Վանին . . .

Հետո նա արագ անցավ ձուլարան.  
Յերկրորդ անիմն առած,  
Դյաղղահը նորից լարեց նա գործի,  
Լարեց ջղերը վերջին:

—Նու, հայր իմ, ասա, կավարտե՞ս այսոր,—  
Մոտեցավ նրան հարազատ վորդին.

—Չեմ կարող արդեն, արդեն կեսոր ե,—  
Ու տիրեց մի պահ լոռւթյուն ու անթիվ  
Մաքեր հղացան վորդու ուղիղում:

—Բայց չե՞ վոր, հայրիկ, խոստացել եմ յես,  
Խոստացել եմ ինձ և ընկերներիս.  
Նրանք անհամբեր սպասում են քեզ՝  
Սյսինքն քո այդ ձեռքի պատվերին:

Ահա դեպում կանգնել ե, նայիր,  
Արդեն ավարտված շոգեմեքենան.  
Մի թե այդ չնչին, չնչին անիվի.  
Պատճառով այսոր անգործ պիտ մնան:

—Լավ, մեղավլոր եմ, վոր. չեմ հասցնում,  
Վոր իմ ձեռքերի ուժը հատել ե...  
Ուժերս լարած, տես, աշխատում եմ,  
Նայիր ճակատիս . . . արդեն քրտնել' ե . . .

Անիվը հանգարտ, հանդարտ պատվում եր,  
Հղկում եր նրան սղոցն այն սուր.  
Դյազգահի կողքով անվերջ թափում եր,  
Կոպիտ քերվածքը բլուրներ դիզում:

Կանգնած եր Վանին լուռ ու մտածկոտ,  
Բայց փայլում եյին աչքերը նրա.  
—Միթե իմ հայրը քաշվում ե մի կողմ,  
Զի ուզում խառնվել մեր այս պայքարին:

—Բայց, չե վոր հայրիկ, քո այդ մկանոս  
Բազուկներում կտ ուժ մի առնական.  
Ասա, չնչու չես ուզում գու խառնվել,  
Մեր այս մաքառման պայքարին հսկա:

Յեվ խղճանում ե հայացքը նրա,—  
Վանին ավելի յեռանդ ե առնում:  
Քանի զնում ե ձեռքերն արագ  
Յեվ նոր թափով եր անիվը պտտում:

— Հանքերում ունենք պղինձ ու չուգուն,  
Գնացքներ են պետք, վոր նրանց ըերեն.  
Մինք պետք ե ջանենք անդուլ և անքուն,  
Սյու պահանջում ե հնդամյակը մեր:

Անիմն արագ, արագ պտտվում եր,  
Հղկում ու նրան սղոցն այն սուր  
Դյազգահի կողքով անվերջ թափում եր  
Կոպիտ քերվածքը, բլուրներ դիզում:

Առավոտյան դեմ ծերունին յեկավ,  
Յեկավ ու գեմքին փայլեց մի նոր խինդ.—  
—Լավ, յես կաշխատեմ իմ այս զյազգահին,  
Թե կուղեք, տվեք ինձ մի ուչենիկ.

Տվեք, վոր նրան յես վարպետ դարձնեմ,  
Վոր նա աշխատի կառուցման համար.  
Ու ինձ ել զրեք նոր հարվածային,  
Յես ել ձեզ ընկեր—անդուլ և համառ:

Ու բանվորները նայեցին նրան:  
Բրիգադիր Վանին ժպտաց այս անդամ.  
—Հայրս յեկել ե ուզում ե զանալ  
Մեր հաղթ կառուցման խեկալան անդամ:

Յեվ նրան տվին մի նոր աշակերտ.  
Գրեցին նրան վոնց հարվածային.  
—Այդպես, հայր իմ, այս կյանքը կերտիր  
Յեղիր մաքառման մի հերոս մարտիկ:

Թող հնդամյակը ժպտա յերկաթե,  
Վարկյանը թռչի ու կորչի արագ.  
Մենք այդ վարկյանում կշարենք անթիվ,  
Փայլուն գնացքներ ուելսերի վրա:

Յեթե թշնամին կոխի մռութն իր,  
Ուզի հոտնոտի մեր սահմաններին,  
Մենք՝ մեքենավար, մենք հայր ու վորդի  
Տանկերով կելնենք վերջին պայքարին:

Դու գնդացիր ես յեղել դիրքերում,  
Իսկ յես սնայպեր կլինեմ սահմանում  
Վորովհետեվ, հայր, ուրիշի հողից,  
Մենք վոչ մի վերշոկ չենք ուզում առնել,  
Յեվ մերից չենք տա, չենք տա վոչ մի թիզ,  
Զե վոր մեր հողը արնով ենք առել:

Յեվ շշակներն են կանչում գեպոյում,  
Յեվ գնացքներն են յելնում գրոհի,  
Յեվ անիմսերն են արագ պտտվում,—  
Դեմից բարձրանում ե ծածանվող մի գրոշ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	<u>հջ</u>
I. Բլոկ	
1. Բալիկին	5
2. Դ. Մ. Ֆուրմանովին	6
3. Հասունացում	7
4. Պեյզաժ	8
5. Բնրկրանք	9
6. Գուրգեն Մահարուն	10
7. Այսպես սիրեց նա մեկին	11
8. Նա նրան սիրեց	12
9. Զենք մռանա	13
II. Ուղեգիր դեպի կյանք	
10. Մի աղջկա	17
11. Պահանջը	19
12. Հենակ	24
13. Հերոսը	27
14. Յերգը	29
15. Յերգ քսանվեցի մասին	34
III. Արշակ	
16. Արշակ	39

1. 1. 1. 1. 1.

1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1.

1. 1. 1. 1. 1.

1. 1. 1. 1. 1.

«Ազգային գրադարան



NL0352890

1 р. 50 л.  
4ш9мл 25 л.

46960

Гурген Шагинян

# КАСПИЙСКОЕ УТРО

Авернешр  
Баку—1934